«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԻՆՔՆԱՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՀԵՂԻՆԱԿ՝ ՌՈՒՍՏԱՄՅԱՆ ԷՄՄԱ

ԽՈՒՄԲ/ԱՌԱՐԿԱ՝ 4-ՐԴ/ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՍԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

Գլուխ 1. Կարողանակություններն որպես հանրակրթության բովանդակության հենասյուն 5

1.1 Կարողունակություն հասկացության սահմանումը, ... 5

8 կորողունակությունները 5

1.2 Կարողունակության բաղադրիչները 8

Գլուխ 2. Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակության դրսևորումները 9

2.1 Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակության ընդհանուր բնութագիրը և բնութագրիչները 9

2.2 Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակությունների ձևավորումը պատմության դասավանդման ընթացքում 14

Եզրակացություն 24

Օգտագործված գրականություն 25

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գիտատեխնիկական վիթխարի թռիչքների, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների հարաճուն ներդրման շնորհիվ աճում է կրթության դերն ու նշանակությունը ամբողջ աշխարհում: Ուստի ժամանակի ու հասարակության պահանջները բավարարելու, համաշխարհային գործընթացներին ու զարգացումներին համաքայլ ընթանալու համար ՀՀ-ում ևս կատարվեցին խորքային, արմատական և համակարգային լուրջ բարեփոխումներ:

Փոխվեց նաև կրթության կազմակերպումը, կառուցվածքը և բովանդակությունը; Այսօր արդիական ու հրատապ է դարձել, որ ուսումնական գործընթացում մեր սովորողները ձեռք բերեն ոչ միայն գիտելիք և արժեքներ, այլև կարողունակություն, հմտություն, լինեն նախաձեռնող, ունենան սեփական ակտիվ դիրքորոշում, ստեղծագործական ու քննադացական մտածողություն, առաջ քաշեն ինքնագնահատման և ինքնակառավարման հիմնահարցեր, լինեն պատասխանատու քաղաքացի ժամանակակից բազմազան ժողովրդավարական հասարակարգում;

Պատահական չէ, որ հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակությունը նպատակաուղղված է ուսումնառության ակնկալվող վերջնաարդյունքների միջոցով կարողունակությունների ձևավորմանը:

Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների ու դիրքորոշումների հիման վրա, ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են:

Միջնակարգ կրթության կարողունակությունները ութն են:

Մեր հետազոտության թեման է՝ Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակության զարգացումը պատմության դասվանդման ընթացքում;

Նպատակը՝

- Սովորողները կծանոթանան մի շարք գաղափարների ու հասկացությունների:

- Կկարողանան հասկանալ և գնահատել սովորելու գործընթացը, գործնականում կկիրառեն ստացած գիտելիքները, կլուծեն առօրյա խնդիրները, և կգտնեն իրենց հուզող տարբեր հարցերի պատասխանները:
- Կզարգացնեն պատմական դեպքերը, երևույթները համեմատելու, համադրելու, վերլուծելու,քննադատելու, գնահատելու, սեփական տեսակետ արտահայտելու կարողություններ:
- Ձեռք կբերեն ինքնավստահություն, պատասխանատու վարքագիծ, մարդկանց հետ արդյունավետ հաղորդակցվելու հմտություններ:
- Կկարողանան ինքնանդրադարձման և ինքնակազմակերպման միջոցով հասնել ինքնաճանաչման;

Թեմայի խնդիրները՝

- Համեմատել, վերլուծել, համադրել արժեք, հմտություն, դիրքերոշում, կարողունակություն հասկացությունները և դրանք հասանելի դարձնել սովորողին;
- Արժևորել և գիտակցել ինքնաճանաչողական և սոցիալական կարողության դերը առարկան ուսուցանելիս և այն փոխանցել սովորողին:
- Կիրառել ուսումնական գործունեության տարբեր տեսակներ, ուսուցման արդյունավետ մեթոդներ ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակությունների ձևավորման նպատակով:
- Նպաստել իրավահավասարության, մարդասիրության և արդարության մթնոլորտի ձևավորմանը դասապրոցեսում: Այսպիսով կստեղծվի ապահով ուսումնական միջավայր առարկայի դասավանդման ընթացքում:

Գլուխ 1 Կարողանակություններն որպես հանրակրթության բովանդակության հենասյուն

1.1 Կարողունակություն հասկացության սահմանումը, 8 կորողունակությունները

«Կարողունակություն/կոմպետենցիա/» եզրույթը մանկավարժական գրականության մեջ սկսվել է շրջանառվել 20-րդ դարի 70-80ական թվականներից, երբ արևմտյան երկրներում և ԱՄՆ-ում սկսեցին լրջորեն քննադատել կրթության նպատակներն ու բովանդակության ձևավորման մոտեցումները: Արագ փոխվող կյանքը, գիտության ու տեխնիկայի շարունակական աճը մասնագետներից պահանջում էին աշխատանքային շուկային արագ հարմարավելու ճկունություն: Ամերկյան հետազոտողները պարզեցին, որ շատ հաճախ մարդկանց ինտելեկտի բարձր աստիճանը մասնագիտական գործունեության ժամանակ մնում է չիրացված:

Ամերիկայի հետազոտողները կատարեցին բարձր արդյունավետության հասած մարդկանց վարքի գործունեության ուսումնասիրություններ և արդյունքում ձևակերպեցին նրանց ընդհանրությունները միավորող որակների համալիր խումբ, որն անվանեցին կոմպետենցիա;

Այդ ժամանակ արդեն պարզ դարձավ, որ միայն նեղ առարկայական դաշտում գիտելիքների հաղորդումը և հմտությունների, ձևավորումը բավարար չէ, այլ անհրաժեշտ է հանրակրթության նպատակների առավել լայն գիտակցում;

Պարզեցին, որ հանրակրթությունը պետք է ձևավորի այնպիսի կարողունակություններ, որոնք անհրաժեշտ են յուրաքանչյուր անհատին, արագ փոփոխվող հասարակարգում հաջողությամբ կազմակերպելու իր առօրյա կյանքն ու գործունեությունը և 2000-ականների սկզբին առանցքային կարողունակությունների ձևավորմանը նպատակաուղված կրթական ծրագրեր սկսեցին կառուցել, արագ զարգացող, նորարական տնտեսություններ ունեցող բազմաթիվ երկրներ:

Եվ այսպես առանձին առարկաների բովանդակության վրա կառուցված կրթական մոդելը իր դիրքերը արագորեն զրջում է առանցքային կարողունակությունների վրա հիմնված մոդելին:

Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են; Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում, ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով, և բխում են կրթության հիմնական նպատակներից: Փաստորեն հանրակրթության նոր չափորոշիչի հիմքում ընկած է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումը / տես գծապատկեր 1/



Կրթության բովանդակության կառուցման ստորակարգային սխեմա:

Չափորոշիչով որպես հանրակրթության գերագույն նպատակ սահմանվել է ութ առանքային կարողունակությունների ձևավորումը:

Այնուհետև ձևակերպվել են դպրոցի տարբեր աստիճանների շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներ: Դրանք այն վերջնարդյունքներն են, որոնք կոչված են ձևավորելու առանցքային կարողունակությունները: Որպեսի այդ վերջնարդյունքները հասանելի լինեն, ձևակերպվել են կրթության բովանդակային դաշտը տրոհող յոթ ուսումնական բնագավառները, այդ բնագավառները ներկայացնող առարկայացանկերի ձևավորման սկզբունքներն, որոնց հիման վրա ներկայացվել է հենքայի ուսումնական պլանը, որը ներառում է տարբեր ուսումնական բնագավառներին հատկացվող ժամաքանակների տոկոսային համամասնությունը;

Համաձայն նոր չափորոշիչի տրամաբանության դպրոցի տարբեր աստիճաններին շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները պիտի ուղենիշ հանդիսանա առանձին առարկաների չափորոշիչների և ծրագրերի մշակման համար, որոնց հիման վրա էլ պետք է ստեղծվեն՝ համապատասխան դասագրքերն ու ուսումնական այլ գրականությունը:

2021թ ՀՀ կառավարության կողմից հաստատված հանրակրթության պետական չափորոշիչով սահմանվել են միջնակարգ կրթության հետևյալ 8 կարողունակությունները:

1. Լեզվական գրագիտություն կարողունակություն,
2. Սովորել սովորելու կարողունակություն,
3. Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն,
4. Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն
5. Թվային և մեդիա կարողունակություն,
6. Մշակութային կարողունակություն
7. Մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն,
8. Տնտեսական կարողունակություն:

1.2 Կարողունակության բաղադրիչները

Կարողունակության անհատի համալիր բնութագրիչ է, այն գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների համակարգ է, որը թույլ է տալիս այս կամ այն ոլորտում հաջողությամբ լուծելու որոշակի խնդիրներ:

Համաձայն այս սահմանման՝ եթե որև է մեկը հավակնում է կարողունակ լինել որև է բնագավառում , ապա նա պետք է տիրապետի այդ բնագավառին բնորոշ որոշակի գիտելիքների, հմուտ լինի այդ բնագավառում որոշակի գործունեություն ծավալելու, պետք է ունենա նաև արժեքային որոշակի համակարգ և կարողանա իր դիրքորոշումն արտահայտել այդ բնագավառի որոշակի հարցադրումների երևույթների վերաբերյալ ;

Կարողունակությանը նշված բոլոր չորս որակների առկայություն է, և դրանցից որև է մեկ բացակայությունը թույլ չի տալիս սովորողիմ, կամ քաղաքացուն հաջողությամբ լուծելու իր առջև ծառացած խնդիրները; Կարողունակությունը չի կարելի համարել վերջնականորեն ձևավորված, որև է արդյունք; Վերջինիս ձևավորումն անընդատ գործընթաց է և այն անընդհատ կարող են կատարելագործել: Կարողունակությունների ձևավորումը սկսվում է վաղ մանկությունից և Շարունակվում ամբողջ կյանքի ընթացքում :/Տես գծապատկեր 2/



Կարողունակության բաղադրիչները

Գլուխ 2. Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակության դրսևորումները

2.1 Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակության ընդհանուր բնութագիրը և բնութագրիչները :

Ինքնաճանաչողական հիմքը, որի վրա մենք պետք է կենտրոնանանք, սեփական ուժեղ և թույլ կողմերի իմացությունն ու գիտակցումն է, ինքնազարգացմանը միտված վարքագծի դրսևորում: Իր ժամանակին ինքնաճանաչողության կարևորությունը արժևորել է նաև Գ. Նժդեհը

…Կուզեյի, որ դո՛ւ, հայ երիտասարդ, որ դու յուրացնեիր ինքնաճանաչողությունը որպեսուժի, հաղթանակի, և բարձր երջանկությանամենակարճ ու ամենաստույգ ճամփա: Ծանի՛ր զքեզ:

Կուզեի, որ իմաստասիրական այս հրամայականը քանդակված լիներ մեր դպրոցական շենքերի ճակատին, ապա մեր աշակերտության ուղեղի մեջ…

Այն ողորմելիորեն տկար էակը չէ մարդը, որպեսզին ճգնում է նրան ներկայացնել նյութապաշտական կարճատես գիտությունը: Մարդը գրեթե ամենակարողն է, երբ գիտակցում է, թե իր մեջ թաքուն ուժերի մի ամբողջ ծով կա, որից առատորեն օգտվում է ինքնաճանաչ անհատը:

Ուրեմն, եղի՛ր ինքնաճանաչ, երիտասարդ բարեկամ, հավատա՛ թաքուն ուժերիդ, որպեսզի աշխարհը չկարողանա սահման դնել քո հոգու ավյունի, թափին, թռիչքին:

Ինքնաճանաչողականությունը սովորողներին հնարավորություն է ընձեռնում ինքնանդրադարձման և ինքնակազմակերպման միջոցով ձգտել ինքնաչանաչման: Նրանք ձևավորում են վստահություն սեփական ուժերի և կյանքի հանդեպ, հաջողությամբ կառավարում են սեփական ժամանակը, գիտելիքներն ու հմտությունները, կարողանում են դրսևորել առողջ, անվտանգ կենսակերպ, ինչպես նաև ճիշտ մասնագիտական կողմնորոշում:

Սովորողները դրսևորում են հարգանք, ազնվություն և պատասխանատվություն, ինչպես սեփական անձի, այնպես էլ այլոց հանդեպ, անկախ տարիքից , սեռից, ազգությունից, բարեկեցության աստիճանից, արտաքին տեսքից ընդունակություններից, մասնագիտությունից համոզմունքներից և այլ առանձնահատկություններից:

Նրանք սոցիալական հարաբերություններում գործում են կառուցողական և համերաշխ, դրսևորում են ապրումակցելու, ընկերակցելու ունակություն, կոնֆլիկտների խաղաղ և համագործակցային կարգավորման հմտություններ: Տարբեր մշակույթների, կրոնների, աշխարհայացքների և կյանքի կազմակերպման անհատական պատկերացումների հետ առնչվելու արդյունքում սովորողներն ընդունակ են ճանաչել դրանց տարբերությունները:

Ինքնաճանաչողական և սոցիալական կարողությունների ձևավորմումը ներկայացնենք հետևյալ պատկերով.



Ինքնաճանաչողականության և սոցիալական կարողունակության բնութագրիչները՝

<u>Գիտելիք՝</u> Գիտելիքը տեղեկատվության այն ծավալն է, որին անձը տիրապետում, ըմբռնում ու արժևորում է: Ընկալվող և մեկնաբանվող թեմաների շուրջ ակտիվ մտածելու, քննադատաբար գնահատելու իմաստով:

- Ճանաչել սեփական ֆիզիկական, մտավոր և հուզական հնարավորությունները,
- Ճանաչել սեփական ուժեղ և թույլ կողմերը,
- Ճանաչել և համադրել տարբեր զգայարաններով ստացած տեղեկությունները,
- Բացատրել կոնֆլիկտների ազդեցությունը միջազգային և միջխմբային հարաբերությունների վրա:

Հմտություններ՝ Հմտությունը՝ խրթին, լավ կազմակերպված օրինաչափությամբ մտածելու, կամ հարմարվողական վարքագիծ դրսևորելու կարողունակություն է:

- Համադրել տարբեր զգայարաններով ստացված տեղեկությունները, կիրառել դրանք աշխարհաճանաչողության գործում,
- Արտահայտել սեփական մտքերը, զգացմունքները, կարիքներն ու ցանկությունները,
- Գտնել սեփական սխալները, և քայլեր անել, դրանք ինքնուրույն կամ աջակցությամբ ուղղելու համար,
- Կիրառել կոնֆլիկտների խաղաղ լուծման տարբեր ձևեր՝ ըստ անհրաժեշտության,
- Պահպանել սեփական մարմնի խնամքի, հիգիենայի և անվտանգ վարքագծի կանոնները, դրսևորել առողջ ապրելակերպ,
- Վերհիշել սեփական զգացմունքները և ցանկությունները, նպատակներ դնել, մշակել դրանց հետևողական հասնելու ուղիներ,
- Ուսումնասիրել և գնահատել տարբեր մասնագիտությունների համար անհրաժեշտ գիտելիքներն ու կարողությունները, պատճառաբանված ընտրություն կատարել:

Վերաբերմունք՝ Ընդհանուր առմամբ հոգեբանական կողմնորոշում է, որ անհատը որդեգրում է, ինչ որ մեկի, կամ ինչ որ բանի նկատմամբ:

- Ընկերակցել, դրսևորել բաց և դրական վերաբերմունք այլոց հանդեպ, համագործակցել և հաղորդակցվել տարբեր ձևաչափերով, լսել և հարգանքով վերաբերվել այլ մարդկանց տեսակետներին և գաղափարներին,

- Կարողանալ հավասարակշռել և ներդաշնակել սեփական զգացմունքները, ցանկությունները, նպատակները, հակումներն: Ընդունել սեփական յուրահատկությունները,
- Ընդլայնել սեփական ուսումնառության և փորձառության հնարավորությունները՝ դրսևորելով շարունակական ինքնազարգացման վարքագիծ,
- Ակտիվորեն ներգրավել տարատեսակ հանրօգուտ միջոցառումներում:

Արժեք՝ Արժեքները ընդհանուր համոզմունքներ են, որ անհատն ունի այն ցանկալի նպատակների վերաբերյալ, որոնց պետք է ձգտել կյանքում:

- Գիտակցել իր և յուրաքանչյուր անձի յուրահատուկ լինելը,
- Պահպանել հասարակական վարքի իրեն առնչվող կանոններն ու իրավունքները, այդ թվում կանանց ու տղամարդկանց հավասար իրավունքները,
- Ընկալել յուրաքանչյուր մարդու առանձնահատուկ և արժեքավոր լինելը,
- Կարևորել և ստեղծել ընկերական հարաբերություններ, լսել, հասկանալ, ապրումակցել, աջակցել մյուսներին, համագործակցել տարբեր ձևաչափերով, ձգտել կոնֆլիկտների խաղաղ լուծմանը,
- Գնահատել և արժևորել իր և ուրիշների կարծիքն ու փաստարկները,
- Կարևորել հարգանք ցանկացած մարդու արժանապատվության, հիմնարար իրավունքների և ազատությունների հանդեպ:

Ինքնաճանաչման, ինքնագիտակցման ընթացքում, կարևոր է դրականի հետ մեկտեղ բացասականն ընդունել: Բացասական հույզերը բնական են և կարևոր նպատակ են հետապնդում՝ օգնելով մեզ ավելի լավ գտակցել մեր շրջապատը: Օրինակ վախը կարող է օգնել մեզ արձագանքել վտանգին, անհանգստությունը՝ սրել ուշադրությունը, ուժեղացնել զգայարանները, իսկ մեղքի զգացումը կարող է օգնել մեզ վերացնել անցյալի արարքները, որոնք կարող էին վնասակար լինել ուրիշների համար: Բացասական հույզերը, ինչպիսիք են զայրույթը, հիասթափությունը կարող են իրավիճակը փոխել, բարելավելու դրդապատճառ դառնալ: Օրինակ՝ սովորողը, որը պատրաստվում է մասնակցել միասնական քննություններին կարծում է, որ ինքն ամեն ինչ գիտի, իրականում նրա գիտելիքները թերի են: Փաստորեն սովորողը գերագնահատում է իր

կարողությունները: Պարզ է, որ նա ցածր արդյունք կգրանցի: Կա նաև հակառակ ծայրահեղությունը՝ սովորողը թերագնահատում է սեփական կարողությունները: Այս դեպում ավելորդ անհանգստությունը նրան կխանգարի: Նման իրավիճակում լավագույն տարբերակը իրականին մոտ ինքնագնահատական ունենալն է, ինչն օգնում է իրատեսորեն գնահատել իրավիճակը, ծանր ու թեթև անել սեփական կարողունակությունները, գիտակցել ուժեղ և թույլ կողմերը: Սա ինքնազարգացման անձնային աճի կարևորագույն նախապայման է:

Ինքնագնահատականի ձևավորման հարցում մեծ դեր կարող է ունենալ ձևավորող գնահատումը, որում մեծ տեղ է տրվում ինքնագնահատմանը ու փոխադարձ գնահատմանը: Ձևավորող գնահատման ողջ ընթացքում ուսուցիչների, ընկերների կողմից տրված հետադարձ կապը, ինչպես նաև աշխատանքում թույլ տված բացթողումների, սխալների վերլուծությունը մեծ հնարավորություն է տալիս գիտակցելու սեփական ուժերը, բացահայտելու բացթողումները, բարելավելու արդյունքները՝ ապահովելով անձնային աճի ինքակատարելագործում:

Հետազոտողները պարզել են՝ որքան ավելի իրականին մոտ է ինքնագնահատական ունեն սովորողները, այնքան ավելի լավ են տիրապետում ակադեմիական գիտելիքներին, և դրսևորում որակյալ սոցիալական վարք, իսկ ցածր ինքնագնահատականը միջանձնային կոնֆլիկտների աղբյուր է համարվում: Ենթադրվում է, որ դժվարություններ ունեցող ագրեսիվ երեխաները հասակակիցների հետ հարաբերվելիս փորձում են այս կերպ փոխհատուցել ցածր ինքնագնահատականը: Շրջապատի հետ արդյունավետ հարաբերվելու անկյունաքարը իրական ինքնագնահատական է, որպեսի երեխաները սոցիալական որակյալ վարք և պատասխանատու վարքագիծ դրսևորեն, նաև ընկալունակ լինեն մարդկային զանազան խմբերի հանդեպ, հարգանքի, հավասարակշռության գիտակցում ունենան՝ անհրաժեշտ է սկսել ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակության քայլ առ քայլ զարգացումից: Հասարակական բոլոր իրավիճակներում՝ լինի դա ընտանիքում, դպրոցում, աշխատավայրում, թե արտաքին աշխարհում միմյանց հետ հարաբերվել կարողանալը կենսական կարևորություն ունի մարդկանց համար:

Միմյանց հետ հարաբերվելու հմտությունն աշակերտների մեջ հարկավոր է ձևավորել շարունակաբար՝ օրեցօր, ուսումնական ողջ գործընթացում, ներհոսելով դպրոցական ողջ ծրագրում:

2.2 Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակությունների ձևավորումը պատմության դասավանդման ընթացքում

Սովորողի՝ ինքնաճանաչողության և սոցիալական կարողունակության, դրա արդյունքում ինքնավերլուծության, ինչպես նաև ինքնագնահատման հիմնախնդիրն առաջ են քաշել 20-րդ դարի աշխարհահռչակ մի շարք գիտնականներ: Սակայն բոլոր տեսությունների ընդհանրացումն ու համակարգումը կարելի է համարել Բենջամին Բլումի տեսությունը (Բլումի տաքսոնոմիան), որը կոնկրետ հիմքերի վրա դրեց սովորողի ինքնաճանաչողության մեխանիզմները: Այն մտավոր ունակությունների և կրթական ձեռքբերումների հիերարխիկ դասակարգումն է: Բլումը առանձնացնում է ուսուցման նպատակների տաքսոնոմիան կամ աստիճանակարգությունը ըստ կրթական աստիճանների, և այն ներկայացնում է բուրգի տեսքով գիտելիք, ընկալում, կիրառում, վերլուծություն, գնահատում:



Բլումի տաքսոնոմիան

Ըստ նրա յուրաքանչյուր ուսուցման միջավայրում շատ կարևոր է սկսել ամենացածր մակարդակից և աշխատել բուրգի մակարդակների աստիճանաբար ապահովման ուղղությամբ, այսինքն՝ պարզից բարդ: Այս ամենը կազմում է սովորողի ինքնաճանաչողության և սոցիալական կարողունակության ակտիվությունը ուսումնասիրության գործընթացում, և ցանկացած աստիճանի վրա կանգ առնելը նշանակում է այդ գործընթացի տապալում: Այո՛, կարողունակությունները սովորողի մեջ պետք է զարգացնել կրթական երեք աստիճաններում և ընդհանրապես ուսուցման ողջ ծրագրերում:

Ժամանակակից կրթական համակարգում առաջնորդվում են Բլումի տաքսոնոմիայի սկզբունքներով, որը հետաքրքիր է, զարգացնող ու արդյունավետ: Եթե համեմատենք, կտեսնենք, որ բավականին մեծ է ավանդական և կարողունակությունների ձևավորմանը ուղղված դասի տարբերությունը՝

Ավանդական դաս	Կարողունակությունների ձևավորմանն ուղղված դաս

Ավանդական դասի ընթացքում սովորողները պասիվ են, հիմնականում լսում են	Կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասի ընթացքում սովորողները հնարավորություն ունեն հարցեր տալու, կարծիք հայտնելու
Գործում է ուսուցիչ-աշակերտ կապը	Բացի ուսուցիչ-աշակերտից, նաև աշակերտ-աշակերտ կապը
Ուսուցիչն ըստ թեմատիկ պլանի ծրագիրն անցնում է	Ուսուցիչը մյուս թեմային չի անցնում, քանի դեռ աշակերտները չեն յուրացրել տվյալ թեմայի առանցքային գաղափարները
Ուսումնական նյութը ծավալուն է, հաճախ կարևորն ու անկարևորը տարբերակված չեն	Ուսումնական նյութը կառուցված է առանցքային կարողունակությունների և գաղափարների շուրջ
Ուսումնական նպատակները ոչ միշտ են չափելի	Ուսումնական նպատակները չափելի են, և թափանցիկ սովորողների համար
Շեշտը դրվում է գիտելիքների ուսուցման վրա	Գիտելիքից բացի կարևորվում է նաև արժեքը, վերաբերմունքը, հմտությունը
Ուսումնական առարկաների անջատ ուսուցում	Առարկաների ուսուցման միջոցով զարգանում են վերառարկայական հմտությունները՝ խնդիրների լուծում, քննադատական մտածողություն, համագործակցություն
Ուսումնական նյութի մեխանիկական վերարտադրությունը՝ առանց գործնական հմտությունների հետ կապակցելու	Բովանդակության խոր ըմբռնում ու կապակցումն հմտությունների հետ
Շեշտը դրվում է միավորային գնահատման վրա	Օգտագործվում են գնահատման տարբեր մոտեցումներ, շեշտը դրվում է ձևավորող գնահատման վրա

Աղյուսակից պարզ երևում է, որ սովորեցնելու հիմքում վերլուծությունն է, հատկապես ինքնավերլուծության գործընթացը: Այս գործընթացը թերի կհամարվի, եթե այն չամբողջանա ինքնաճանաչողության և սոցիալական կարողության կամ գնահատման գործընթացով, որտեղ առանձնահատուկ նշանակություն ունի ինքնագնահատումը: Ինքնաճանաչողության և սոցիալական կարողունակության արդյունքում, սովորողը, անպայմանորեն դուրս գալով գիտելիքի պարզ վերարտադրության գործընթացից, մղվում է նորի ստեղծմանը, ինքնուրույն աշխատանքների արդյունքում ու ստեղծագործական մտածողության հիմքերով: Սակայն նորի ստեղծումը չի կարող լինել չգիտակցված գործընթաց, այն միշտ գիտակցված է, և՛ սովորողի, և՛ դասավանդվողի կողմից, որն անպայմանորեն պետք է գնահատի նաև հենց ինքն սովորողը: Շատ կարևոր է, որպեսզի դասավանդողի գնահատումն ու սովորողի գնահատումը ներդաշնակ ու համաձայնեցված լինեն:

Այստեղից էլ բխում է սովորողի ինքնաճանաչողության և սոցիալական կարողունակության ակտիվորեն կիրառման հիմնահարցը հենց պատմության դասավանդման գործընթացում:

Հայրենագիտություն բնագավառի նպատակը՝ ազգային գիտակցությամբ օժտված, ազգային և համամարդկային արժեքները ճանաչող և արժևորող, ինքնուրույն ստեղծագործական մտածողությամբ օժտված, անցյալի և ներկայի հասարակական և քաղաքական երևույթները վերլուծելու, քննադատելու, և լուծման սեփական տեսակետ արտահայտելու հմտությամբ օժտված բազմագիտակ քաղաքացու դաստիարակումն է:

Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություններ կարելի է զարգացնել պատմության դասավանդման ընթացքում, եթե ուսուցիչը գործածի զանազան մեթոդներ և հնարներ, որոնք կնպաստեն հասնելու ուսուցման նպատակին: Չէ, որ մեթոդը կարևոր միջոց է աշակերտների մտածողությունը խթանելու, տեղեկատվությունը հիմնավոր ընկալելու, համակարգելու, քննադատական և ստեղծագործական մտածողությունը զարգացնելու համար: Պատմության ուսուցման մեթոդները բազմազան են՝

- Խոսքային մեթոդներ
- Զննական ցուցադրական
- Գործնական

- Տրամաբանական
- Ճանաչողական-ստեղծագործական
- Համագործակցային
- Խմբային աշխատանքի

Բնական է, որ միանգամից, մի դասի ժամանակ հնարավոր չէ օգտագործել մեթոդների ողջ զինանոցը, այլ պետք է յուրաքանչյուր դասի համար կատարվի ուսուցման մեթոդների ընտրություն: Ուսուցման մեթոդների ընտրության հիմքում ընկած են դիդակտիտական այն խնդիրները, որոնք լուծվում են դասի ժամանակի, կամ դասի որոշակի փուլում: Բացի դասի նպատակից ու խնդիրներից, մեթոդների ընտրությունը կախված է նաև դասի տիպից ու կառուցվածքից, ուսումնական նյութի բովանդակությունից, աշակերտների տարիքից, պատրաստվածության մակարդակից, հետաքրքրությունից, ուսումնադիտողական պարագաների առկայությունից, դասարանում աշակերտների թվաքանակից և այլ գործոններից:

Այսպես, եթե դասի տվյալ փուլում հիմնական խնդիրը գիտելիքների հաղորդումը և ուսումնական նյութի ընկալումն է սովորողների կողմից, ապա կարելի է կիրառել խոսքային, զննական մեթոդներ: Սովորողը մեկնաբանում է առանձին փաստեր ու երևույթներ, բացատրում է պատմական տերմինները, հասկացությունները: Եթե առանձին սովորողներ լավ չեն ընկալում նյութը, բերվում են լրացուցիչ փաստարկներ, համոզիչ օրինակներ:

Իսկ եթե դասի տվյալ փուլի հիմնական խնդիրը սովորողների ինքնուրույն կամ ստեղծագործական մտածողության զարգացումն է, ապա կարելի է կիրառել էվրիստիկ զրույցի կամ ինտերակտիվ ուսուցման մեթոդը, որի ժամանակ օգտագործվում են այնպիսի հարցեր, որոնք բացահայտում են, պատմական դեպքերի և երևույթների որոշակիորեն չարտահայտված պատճառահետևանքային կապերն ու հարաբերությունները, դրանց նմանություններն ու տարբերությունները: Առաջարկված հարցերի շուրջ տեղի է ունենում մտքերի փոխանակություն, հայտնում են կարծիքներ ու ենթադրություններ, կատարվում է դրանց քննարկումներ, ուղվում են ոչ ճիշտ դատողությունները: Դատողությունները, եզրակացությունները հաստատվում են

ինքնուրույն համոզիչ օրինակներով: Հարցերը պետք է կառուցել այնպես, որ յուրաքանչյուր հաջորդը բխի նախորդից, լինի պատճառաբանված:

Դասի կոնկրետ փուլում հիմնական դիդակտիկական խնդրի լուծման գործում վճռական դեր խաղացող մեթոդը կոչվում է գլխավոր մեթոդ: Սակայն, դասի տվյալ փուլի հիմնական խնդրից բացի, կան նաև այլ խնդիրներ, որոնք լուծվում են օժանդակ մեթոդների միջոցով: Գլխավոր մեթոդը որոշակի ձևով կապելով օժանդակ մեթոդներին, դրանով ավելի լիարժեք կարող ենք հասնել գլխավոր խնդրի լուծմանը:

Օրինակ՝ եթե «Ֆիդայական շարժումը» դասի նպատակն է զարգացնել սովորողների ճանաչողական ակտիվությունը, ապա կարելի է կիրառել մասնակի որոնողական մեթոդը: Այս գլխավոր մեթոդի օգտագործման հետ միասին անպայման պետք է կիրառվի խոսքային, զննական մեթոդները: Միաժամանակ «Ֆիդայական շարժումը» առաջ է բերում հուզական վիճակի դրսևորում: Փաստորեն ամեն մի կոնկրետ իրադրության մեջ կատարելով մեթոդների համապատասխան ընտրություն և դրանց փոխկապակցում՝ պատմության ուսուցիչն ինքն է հայտնագործում իր մեթոդը և ազատ ու անկաշկանդ կիրառում այն:

Պատմության դասավանդման ընթացքում կիրառվող մեթոդներից արդյունավետ է հարցադրումների մեթոդը, որը կարևոր միջոց է աշակերտների մտածողությունը խթանելու, տեղեկատվությունը հիմնավոր ընկալելու, համակարգելու, ստեղծագործական և քննադատական վերլուծական մտածողությունը զարգացնելու համար:

Ուսուցչի կողմից ներկայացվող հարցերը պետք է լինեն՝ հստակ, փակ, հուշող, ենթատեքստով, հետադարձ, ուղղորդող: Բացի այդ, հարցերը պետք է ունենան տրամաբանական հաջորդականություն, համապատասխանեն աշակերտների մակարդակին, մտածելու տեղիք տան: Հարցերը կարող են լինել բազմատեսակ

Օրինակ՝ բաց, դրանց պատասխանի մեջ սովորողը կարող է լինել ազատ, քանի որ միանշանակ պատասխան չունեն: Այս հարցերը սկսվում են «ի՞նչ, ինչպե՞ս» հարցերով: Օրինակ՝ ինչպե՞ս կարող եք գնահատել «Թուրքահայաստանի մասին» հրովարտակը:

Փակ հարցերը այն հարցերն են, որոնք պահանջում են միանշանակ պատասխաններ:

Օրինակ՝ «ե՞րբ է սկսվել առաջին համաշխարհային պատերազմը»:

Հուշող հարցերը նպատակ ունեն աշակերտներին հանգեցնելու ուսուցչի ակնկալած պատասխանին: Այսպես «Միթե՞ դուք կարծում եք, որ ճիշտ է ԼՂ հարցի կարգավորման բանակցային գործընթացը՝ առանց ԼՂՀ-ի մասնակցությամբ»:

Ենթատեքստով հարցերը նման են հուշող հարցերին և հետապնդում են ակնկալվող պատասխանին հասնելու նպատակ: Այսպես, «Դուք հավանաբար կսխալվեք, եթե պնդեք, որ մեծ տերությունները հայկական հարցում ավելի շատ առաջնորդվում էին հայ ժողովրդի, քան իրենց շահերով:» Հետադարձ կապի հարցերն ապահովում են աշակերտների ներգրավումը զրույցի մեջ, նրանց պատասխանները զարգացնելու կամ հետագա քննարկումը խրախուսելու համար: Օրինակ՝ «Դուք ասացիք, որ առանց հայերի մասնակցությամբ հնարավոր չէր լինի ռուսական զորքերի հաղթանակը 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմում»:

Այսպիսով հարցերի մեթոդն ավելի մեծ խնդիր է լուծում, քան փաստերի բուն մտապահումը: Հարցերից ծնվում է երկխոսություն, որի ընթացքում սովորողը ծանոթանում է ընկերների արտահայտած մտքերի բազմազանության հետ, որն իր հերթին ընդլայնում է ողջ դասարանի բառապաշարը, հասկացությունների շրջանակը և մտքերը ստողծագործաբար արտահայտելու նրանց կարողունակությունը:

Հարցերի միջոցով գիտելիքները դառնում են արժեքավոր, քանի որ այդ գիտելիքները նրանք կարողանում են նպատակային ձևով համադրել, վերլուծել, քննադատել: Այնպես որ հարց ու պատասխանի մեթոդը կարելի է օգտագործել դասի տարբեր փուլերում:

Զրույցի մեթոդը, չնայած ավանդական մեթոդներից հաջողությամբ կարող է կիրառվել պատմության դասավանդման ընթացքում: Այդ մեթոդը ուսուցիչը վարպետորեն մշակված հարցերի միջոցով ակտիվացնում է աշակերտների մեջ գիտելիքներն ու կարողունակությունները, խթանում նոր գիտելիքների ձևավորմանը՝ ինքնուրույն վերլուծությունների, դատողությունների, եզրահանգումների միջոցով: Եվ այն կարելի է կիրառել դասի տարբեր փուլերում:

Պատմության ուսուցման գործընթացում արդյունավետ է բանավեճի մեթոդը: Թեմայի շուրջ քննարկում կազմակերպելու միջոցով կատարվում կարծիքների փոխանակում,

գիտելիքի ամրապնդում, նորի ձեռք բերում, սեփական կարծիքի ձևավորում, դիմացինի կարծիքը հարգելու սովորույթ, հիմնահարցի լուծումների որոնում, և դրա համար գործադրված ջանքերի կազմակերպում:

Բանավեճի ընթացքում ուսուցչի հիմնական միջոցը պլանը և հարցերն են: Երբ բոլորն արտահայտվում են հարցի շուրջ, հայտնում իրենց կարծիքներն ու տեսակետները, փաստարկներն ու հիմնավորումները, ուսուցիչը ամփոփում է բանավեճի արդյունքը: Ամփոփումը պետք է լինի հակիրճ, բովանդակալից և ամբողջական:

Բանավեճի համար կարող ենք առաջարկել օրինակ՝ «Ինչպե՞ս եք գնահատում հայկական հարցի առաջացման կարևորությունը»: Հարցը մի կողմից պետք է լինի հետաքրքրաշարժ, իսկ մյուս կողմից չունենա վերջնական պատասխան:

Նախ պետք է վերականգնել աշակերտների ունեցած գիտելիքները հայկական հարցի ծագման և միջազգայնացման, խոշոր տերությունների կողմից այդ հարցի շահարկման, և այն լուծելու թուրքական եղանակի մասին: Այս հարցադրումները սովորողներին մոտիվացնում են հասկանալու հայկական հարցի առանձնահատկությունները, դրսևորման պայմանները, արդյունքները: Այնուհետև դասարանը բաժանել երկու խմբի, որքան հնարավորէ ստեղծել հավասարակշիռ խմբեր: Երեխաներին խմբավորումներից զերծ պահելու համար (հատկապես հիմնական դպրոցում) բացատրել, որ սա զուտ աշխատանքային խումբ է: Աշխատանքի ընթացքում ստեղծել վստահելի ու առողջ մթնոլորտ:

Սովորողները դեմ ու կողմ տեսակետով պետք է հիմնավորեն հայկական հարցի առաջացման կարևորությունը, իսկ ուսուցիչը ուղղորդում է, խրախուսում, ուշադրություն դարձնում սովորողների հաղորդակցման և համագործակցային հմտություններին:

Բանավեճի մեթոդը արդյունավետ է կիրառել ավագ դասարաններում, քանի որ բանավեճի ընթացքում ձևավորվում է քննադատական հայացքներ, վերլուծելու տեսակետ արտահայտելու կարողունակություն: Եթե սովորողը ունի սեփական մեկնաբանման հնարավորություն, անշուշտ կզարգանա նրա ինքնուրույն ստեղծագործական և ճանաչողական կարողունակությունները:

Պատմության դասավանդման լավագույն մեթոդներից է սկզբնաղբյուրով աշխատանքի մեթոդը: Սկզբնաղբյուրները կարևոր դեր ունեն աշակերտների գիտելիքների, վերլուծական կարողությունների և հմտությունների զարգացման գործում: Ուղակիորեն առնչվելով սկզբնաղբյուրի նյութին՝ սովորողը ունենում է զարգանալու, հարցադրումներ անելու, բացատրել և մեկնաբանելու հնարավորություն: Սկզբնաղբյուրով աշխատանքը ինքնուրույն հետազոտական աշխատանքի կարևոր միջոց է դառնում: Այս մեթոդը հնարավորություն է ստեղծում նաև միջառարկայական կապերի ապահովման համար, քանի որ պատմիչների գործերը, նկարները, ֆիլմերը, գրական ու գիտական ստեղծագործությունները, պատմական փաստաթղթերը և վավերագրերը բովանդակում են տարբեր առարկաների վերաբերյալ ինտեգրող գիտելիքներ:

Սկզբնաղբյուրով աշխատանքի ձևերը բազմազան են: Օրինակ՝ հարցեր տալը, սկզբնաղբյուրի մասին, ակնարկ գրելը և վերլուծություն տալը: Կամ գրել պատասխան սկզբնաղբյուրի հեղինակին՝ իրեն պատկերացնելով տվյալ ժամանակաշրջանի մարդ: Պատմության դասաժամերին արդիականության շունչ է հաղորդում ուսուցման տեխնիկական միջոցների կիրառումը: Սովորողները մեծ սիրով թեմայի վերաբերյալ համացանցից համապատասխան նյութեր են գտնում, սահիկաշարեր պատրաստում:

Կարևոր է նաև զննական մեթոդների կիրառումը, էքսկուրսիաները պատմական հնագիտական վայրեր, այցելությունը թանգարաններ: Այսօր պատմական թեմաներով բավականին թեմաներ էկրանացված են: Այս մեթոդների կիրառումը բացառում են միապաղաղությունը: Աշակերտները չեն հոգնում, հանդես են բերում հետաքրքրություն և մեծ ոգևորություն:

Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակությունների զարգացմանը կպաստի նաև խմբային աշխատանքները: Օրինակ՝ «Ազատագրական պայքարի գաղութահայ կենտրոններ» թեման կարելի է ուսուցանել հետևյալ ձևով: Նախ ներկայացնել թեմայի առանցքային գաղափարները, դասարանը բաժանել տարբեր խմբերի և նրանց ճանաչողական գործողություն ակտիվացնելու համար յուրաքանչյուր խմբին տալ կոնկրետ առաջադրանք.

ա) Ինչու՞ 18-րդ դարի երկրորդ կեսին գաղութահայության շրջանում վերելք ապրեց հայ ժողովրդի ազատագրական պայքարը:

բ) Ո՞րն է Էմինի գործունեության նշանակությունը:

գ) Ինչպե՞ս կարող եք բնութագրել Մովսես Սաֆարյանի ծրագիրը, հայ-ռուսական դաշնագրի նախագծերը:

Աշխատանքի արդյունքում սովորողները ունենում են սեփական մեկնաբանման հնարավորություն և դրանով դառնում են ինքնուրույն ու ստեղծագործող, բացի այդ նրանց մոտ ձևավորվում է նաև պատասխանատվության զգացում, վստահություն սեփական ուժերի նկատմամբ, ժամանակը կառավարելու հմտություն, դիմացինի կարծիքը լսելու և հարգելու ունակություն: Քննարկման ժամանակ խրախուսվում է ճիշտ պատասխանները և կատարվում գնահատում, և որպես տնային աշխատանք հանձնարարվում է գրել կարծիք «Ռոգայթ փառաց» աշխատության վերաբերյալ: Թեմայի ուսուցման ընթացքում կիրառված մեթոդների ու հնարների միջոցով 8-րդ դասարանի սովորողների մոտ կձևավորվի ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություններ:

Տարբեր մեթոդներ կիրառելով ուսուցիչը պետք է հրաժարվի սովորեցնողի, վերհսկողի իր դերից, դառնա ուսուցման գործընթացի կազմակերպող, քիչ խոսի, շատ լսի, և խոսեցնի պասիվ սովորողին, նրան ևս ներգրավի և դարձնի դասապրոցեսի ակտիվ ու գործուն մասնակից, օգնի սովորողին ձեռք բերած գիտելիքները կյանքում կիրառելու կարողությունների զարգացմանը:

Եզրակացություն

Սովորողների մեջ ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակությունների զարգացումը պատմության դասավանդման ընթացքում նպաստում է

1. Ուսուցման տվյալ թեմայի, բաժնի առաջադրված խնդիրների նկատմամբ հետաքրքրություն:
2. Զարգանում է ճանաչողական ինքնուրույնությունը և ստեղծագործական ընդունակությունները:
3. Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակությունն օգնում է սովորողին դառնալ ավելի համարձակ, հասուն, իմի բերել ուժերն, ունենալ իրատեսական նպատակ և իմացական գործունեություն հնարավորություն, ընկալել իրեն ավելի լիարժեք, ու գործնականում կիրառել, ձեռք բերած գիտելիքները, հստակ գիտակցելով, թե որտեղ, ինչպես և ինչ նպատակով:
4. Ձևավորում է միմյանց նկատմամբ հումանիստական վերաբերմունք, իրավունքների ու պարտականությունների հարցում, ինքնահարգանք ու բարյացակամություն;
5. Սովորողների մոտ ձևավորվում է համեմատելու, համադրելու, վերլուծելու, քննադատելու, սեփական տեսակետ արտահայտելու, գնահատելու կարողունակություններ:
6. Նրանք սոցիալական հարաբերություններում գործում են կառուցողական և համերաշխ, դրսևորում են ընկերակցելու ունակություն և կոնֆլիկտների խաղաղ ու համագործակցային կարգավորման հմտություններ;
7. Դժվարը վարպետորեն դարձնում է հեշտ, անհասկանալին՝ հասկանալի: Այսպիսով դասավանդման ընթացում ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակության միջոցով ձևավորվում են պահանջվող որակներ սովորողների մեջ, ձայնի լսելության, սիրո մթնոլորտում առանց պարտադրանքի և պատժի ձերբազատման պայմաններում:

Օգտագործված գրականություն

1. Գ.Նժդեհ. Հատընտիր Երևան 2001
2. Կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակ ժողովրդական մշակույթի համար, հատոր 1.
   https://rm.col.int/arm_referance_framework_vol-3/1680a16758
3. Համագործակցային ուսուցում՝ Ձեռնարկ անտերես 2006
4. ՀՊՉ,2021 https:/www.arlis.am documentview.aspx?docid=149788
5. Ուսուցման արդյունավետ հնարներ՝ Երևան Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020